

**ՀՕՐԸ ՄԻՐՈՅ ՆԱՄԱԿԸ
ՄՏԵՐԻՄ ՊԱՏԳԱՄ ՄԸ ԱՍՏՈՒԾՄԷ ՔԵԶԻ**

Զաւակս,

Կրնայ ըլլալ դուն զիս չես ճանչնար, բայց ես քու մասիդ ամէն բան գիտեմ: (Մաղ.139:1)

Գիտեմ երբ կը նստիս ու երբ կ'ելլես: (Մաղ.139:2)

Գիտեմ քու բոլոր ճամբաներդ: (Մաղ. 139:3)

Նոյնիսկ գիտեմ զլիտուդ մազերուն համբանքը: (Մատթ.10:29-31)

Քեզ իմ պատկերովս ստեղծեցի: (Ծննդոց 1:27)

Ինձմով կ'ապրիս,կը շարժիս եւ գոյ ես: (Գործք.17:28)

Որովհետեւ դուն իմ զաւակս ես: (Գործք.17:28)

Մօրդ որովայնին մէջ չկազմուած քեզ գիտցայ: (Երեմ.1:4-5)

Քեզ ընտրեցի երբ ստեղծագործութիւնը ծրագրեցի: (Եփես. 1:11-12)

Դուն սխալի մը արդիւնքը չէիր,քու բոլոր օրերդ գրուած են իմ գիրքիս մէջ: (Մաղ.139:2)

Ես որոշեցի ծնունդիդ ճիշդ ժամանակը եւ ուր պիտի բնակէիր: (Գործք.17:26)

Քեզ ահաւոր ու զարմանալի կերպով ստեղծեցի: (Մաղ.139:14)

Ես քեզ կազմեցի մօրդ արգանդին մէջ: (Մաղ.139:13)

Եւ ծննդեանդ օրը որոշեցի: (Մաղ.71:6)

Ես սխալ հասկցուած եմ անոնցմէ որ զիս չեն ճանչնար: (Յովհ.8:41-44)

Ես զայրացած կամ հեռուները բնակող Աստուած մը չեմ,այլ կատարեալ սիրոյ արտայայտումն եմ:

(Ա.Յով.4:16)

Եւ իմ փափաքս է,որ սերս շոյալեմ քու վրադ, պարզապէս քանի որ դուն իմ զաւակս ես եւ ես՝ Հայրդ: (Ա. Յով.3:1)

Երկրաւոր հօրմէդ շատ աւելին կրնամ տալ քեզի: (Մատթ.7:11)

Քանի որ Ես կատարեալ Հայր եմ: (Մատթ.5:48)

Ամեն բարի տուրք ու կատարեալ պարգև, որ դուն ունիս իմ ձեռքես կու գայ: (Յակ.1:17)

Քանի որ ես եմ քու հայթայթիչդ եւ քու բոլոր կարիքներդ ու բոլոր պէտքերդ կը հոգամ:
(Մատթ.6:31-33)

Քու ապագայիդ համար իմ ծրագիրներս միշտ յուսալից եղած են: (Երեմ.29:11)

Քանի որ քեզ յաւիտենական սիրով կը սիրեմ: (Երեմ.31:3)

Քեզի համար ունեցած խորհուրդներս ծովու աւազին չափ անհամար են: (Սաղ.139:17-18)

Եւ ես ուրախութեամբ պիտի գուարճանամ քեզմով: (Սոփոնիա 3:17)

Քեզի բարիք ընելէ երբէք պիտի չդադրիմ: (Երեմ.32:40)

Որովհետեւ դուն իմ թանկարժէք գանձն ես: (Ելից 19:5)

Իմ ամբողջ սրտովս եւ հոգովս կը փափաքիմ քեզ հաստատել: (Երեմ.32:41)

Կ'ուզեմ քեզի մեծ ու սքանչելի բաներ պատմել, որոնք դուն չես գիտեր: (Երեմ.33:3)

Եթէ քու բոլոր սրտովդ զիս փնտռես,պիտի գտնես: (Բ.Օրինաց 4:29)

Ինձմով ուրախացիր, եւ քեզի պիտի տամ քու սրտիդ բոլոր խնդրուածքներդ: (Սաղ. 37:4)

Քանի ես եմ, որ այս փափաքներդ քեզի կու տամ: (Փիլ.2:13)

Ես կարող եմ քեզի քու խնդրածէդ շատ աւելին տալ: (Եփես.3:20)

Որովհետեւ ես քու մեծագոյն մխիթարիչդ եմ: (Բ.Թես.2:16-17)

Նաեւ ես Հայրդ եմ, որ կը մխիթարեմ քեզ ամեն նեղութիւններուդ ժամանակ: (Բ.Կոր.1:3-4)

Երբ սիրող կոտրած ըլլայ քու մօտդ կ'ըլլամ: (Սաղ.34:18)

Ինչպէս հովիւը գառնուկը կը գրկէ, ես ալ քեզ սրտիս մօտ կը պահեմ: (Եսայ. 40:11)

Օր մը քու աչքերէդ բոլոր բոլոր արցունքները պիտի սրբեմ: (Յայտն. 21:3-4)

Եւ այս երկրի վրայ քաջած բոլոր ցաւերդ պիտի վերցնեմ: (Յայտն. 21:3-4)

Ես քու Հայրդ եմ եւ քեզ կը սիրեմ ինչպէս իմ որդիս Յիսուսը կը սիրեմ: (Յովհ. 17:23)

Որովհետեւ Յիսուսով քեզի հանդէպ ունեցած սէրս կը յայտնաբերուի: (Յովհ. 17:26)

Ան իմ էութեանս բուն պատկերն է: (Եբր. 1:3)

Յիսուս եկաւ ցուցնելու որ ես քու կողմէդ եմ եւ ոչ թէ հակառակորդ, (Հռովմ. 8:31)

Եւ ըսելու որ ես քու մեղքերդ չեմ յիշեր: (Բ. Կորնթ. 5:18-19)

Յիսուս մեռաւ որպէսզի դուն եւ ես հաշտուինք: (Բ. Կորնթ. 5:18-19)

Անոր մահը իմ սիրոյս գերագոյն արտայայտութիւնն էր: (Ա. Յովհ. 4:10)

Ամէն բան որ կը սիրէի մէկդի ձգեցի որ քու սէրդ շահիմ: (Հռովմ. 8:31-32)

Եթէ դուն իմ Որդւոյս՝ Յիսուսի պարգեւը ընդունիս, զիս կ'ընդունիս: (Ա. Յովհ. 2:23)

Եւ ոչ մէկ բան կրնայ երբեք քեզ զատել իմ սէրէս: (Հռովմ. 8:38-39)

Տուն եկո՛ւր եւ քեզի համար ամենամեծ խնջոյքը պիտի սարքեմ, որ երբեք տեսած չես:
(Ղուկ. 15:7)

Ես միշտ քու Հայրդ եղած եմ եւ միշտ քու Հայրդ պիտի ըլլամ: (Եփես. 3:14-15)

Հարցումս այս է. «Դուն իմ զաւակս կուզե՞ս ըլլալ»: (Յովհ. 1:12-13)

Քեզ կը սպասեմ կարօտով: (Ղուկ. 15:11-32)

Միրով՝ Հայրդ

Ամենակարող Աստուած

Հօրը սիրոյ նամակը հաւաքածօն է Աստուածաշունչի համարներուն որոնք համադրուած են Աստուծա՛յլ քեզի ուղղուած նամակի ձեւով:

© Father Heart Communications - FathersLoveLetter.com - Please feel free to copy & share with others.

© Հօր սրտի Հաղորդակցութիւնները - FathersLoveLetter.com - Ազատ էք պատճենահանելու եւ բաժնեկցելու

Translated by Rita Davidian, Pasadena, CA